ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1

№ ԳՀԾՁԲ-20-20/1-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 18 .03.2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ Ն. Յոլչյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև՝ Պատվիրատու, մի կողմից և Ա/Ձ Մեժլում Գրիգորյանը, այսուհետև՝ Կատարող, մյուս կողմից, հիմք ընդունելով 25.11.2019թ. կնքված № ԳՀԾՁԲ-20-20/1-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.13 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին

1. Համաձայնագրի առարկան

1.1 Սույն Համաձայնագրով Կատարողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով, Համաձայանագրի № 1 Հավելվածով՝ նախատեսված ժամկետներում մատուցել Պայմանագրի №1 Հավելվածով նախատեսված ծառայության մատուցում (այսուհետև՝ Ծառայություն), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել այդ Ծառայության արդյունքը և վճարել դրա համար:

2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրով Կատարողի կողմից մատուցված Ծառայության գինը ներկայացված է սույն Համաձայնագրի № 1 հավելվածում: Համաձայնագրի առավելագույն գինը կազմում է 60000000 (վաթսուն միլիոն) ՀՀ դրամ, որից 20000000 ՀՀ դրամը 1-ին չափաբաժնի ծառայության մատուցման համար, 40000000 ՀՀ դրամը՝ 2-րդ չափաբաժնի ծառայության մատուցման համար: Սույն Ծառայության գինը ներառում է Համաձայնագրի կատարումն ապահովելու նպատակով, Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Պատվիրատուն մատուցված Ծառայության դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 4.2 կետին համապատասխան, բայց ոչ ուշ քան 10.12.2020թ.:

3. Այլ պայմաններ

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ծառայության մատուցման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 3 թերթից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն Համաձայնագրի № 1, № 2 Հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ Ինժեներական զորքերի վարչությունը:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	Ա/Ձ Մեժլում Գրիգորյան
ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5	ք. Աբովյան, 4-րդ մկշ., 11շ, 20բն
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	ԷՎՈԿԱԲԱՆԿ ՓԲԸ
Հ/Հ 900011144079	ՀՀ 1660009740880100
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 43078315
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ	
Ն. ՅՈԼՉՅԱՆ	Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված N 1

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Գնման ենթակա ծառայությունների անվանումը	Չ/մ	Քանակը	Առավելագույն գումարը (ՀՀ դրամ)	Ծառայությունների մատուցումը 2020թ՝ ըստ եռամսյակների, ընդ որում՝			
					1-ին եռամսյակ	2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ
1	**Ոչ էլեկտրական մեքենաների վերանորոգման և պահպանման ծառայություններ** (Ինժեներական տեխնիկայի ետերաշխիքային ծառայությունների մատուցում /էքսկավատոր/)	դրամ	1	20000000	2800000	8500000	5700000	3000000
2	**Ոչ էլեկտրական մեքենաների վերանորոգման և պայպանման ծառայություններ** (Բարձր արտադրողականության ճանապարհաշինական տեխնիկայի վերանորոգման ծառայության ծեռքբերում) այդ թվում՝	դրամ	1	40000000	9000000	18000000	5000000	8000000

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

Ա/Ձ Մեժլում Գրիգորյան

Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված N 2

Վճարման ժամանակացույց

ՀՀ դրամ

Հ/հ	Ծառայության անվանում	Նախատեսվում է ֆինանսավորել 2020թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 10.12.2020թ.										
		CPV կոդեր	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	**Ոչ էլեկտրական մեքենաների վերանորոգման և պահպանման ծառայություններ** (Ինժեներական տեխնիկայի ետերաշխիքային ծառայությունների մատուցում /էքսկավատոր/)	50531100/513	2800000	11300000	11300000	11300000	17000000	17000000	17000000	20000000	20000000	20000000
2	**Ոչ էլեկտրական մեքենաների վերանորոգման և պայպանման ծառայություններ** (Բարձր արտադրողականության ճանապարհաշինական տեխնիկայի վերանորոգման ծառայության ձեռքբերում) այդ թվում՝	50531100/511	9000000	27000000	27000000	27000000	32000000	32000000	32000000	40000000	40000000	40000000

** Վճարման ենթակա գումարը ներկայացված է աճողական կարգով*

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ

Ա. ՁՈԼՈՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

Ա/Ձ Մեժլում Գրիգորյան

Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ